Ութերորդ հաղորդում

Փորձառաբար ապրել ու վայելել համաբովանդակ Քրիստոսին՝ որպես բարի երկրի, երկրի, որտեղ ոչնչի պակասություն չունենք

Գրվածքների ընթերցում. Կող 1:12, 2:6-15, 19, Երկ Օր 8:9, Ծնդ 17:1, Փլպ 1:19

I. Քրիստոսը՝ որպես առաջնություն ունեցող ու համաբովանդակ Անձ, լույսի մեջ սրբերին հատկացված բաժինն է մեր փորձառության և վայելքի համար՝ Կող 1:12.

Ա. Հատկացված բաժինը վերաբերում է ժառանգություն հատկացնելուն, ինչի լուսաբանումը Քանանի բարի երկիրն Իսրայելի զավակներին որպես ժառանգություն հատկացնելն է՝ Հս 14:1:

Բ. Նորկտակարանյան հավատացյալներին հատկացված բաժինը ոչ թե ֆիզիկական երկիր է, այլ համաբովանդակ Քրիստոսը՝ որպես կենդանարար Հոգի՝ Կող 2:6-7, Գղտ 3:14.

1. Բարի երկրի հարստությունը Քրիստոսի անքննելի հարստության տարբեր տեսանկյունների նախատիպ է՝ որպես Նրա հավատացյալների համար Նրա Հոգու մեջ եղող առատ մատակարարում՝ Երկ Օր 8:7-10, Եփս 3:8, Փլպ 1:19:
2. Երկրի հարստությունը վայելելով՝ Քրիստոսին հավատացողները կառուցվում, դառնում են Քրիստոսի Մարմինը՝ որպես Աստծու տունը և Աստծու թագավորությունը՝ Եփս 1:22-23, 2:21-22, Ա Տմթ 3:15, Մտթ 16:18-19, Հռմ 14:17:

Գ. Մենք պետք է լույսի մեջ լինենք, որպեսզի վայելենք համաբովանդակ Քրիստոսին՝ որպես բարի երկրի. լույսն Աստծու ներկայությունն է՝ Կող 1:12, Ա Պտ 2:9, Եսյ 2:5, Ա Հվի 1:5.

1. Աստված լույս է՝ խ. 5:
2. Աստծու խոսքը լույս է՝ Սղմ 119:105, 130:
3. Քրիստոսը լույս է՝ Հվի 8:12, 9:5:
4. Քրիստոսի կյանքը լույս է՝ 1:4:
5. Հավատացյալները լույս են՝ Մտթ 5:14, Փլպ 2:15:
6. Եկեղեցին լույսով շողացող ճրագակալ է՝ Հյտ 1:20, Սղմ 73:16-17:

II. Կող 2:6-7-ը բացահայտում է, որ Քրիստոսը՝ որպես բարի երկիր, երկիր, որտեղ ոչնչի պակասություն չունենք (Երկ Օր 8:9), այն հարուստ հողն է, որի մեջ մենք արմատավորվել ենք, որպեսզի հողից կլանած տարրերով աճենք (Եփս 3:17բ).

Ա. Աստված իրական Հողագործն է, և Պողոսը Նրա համագործակիցներից մեկն էր (Ա Կրթ 3:6-9, Բ Կրթ 6:1ա). Պողոսը հավատացյալներին տնկում էր Քրիստոսի՝ որպես հողի մեջ:

Բ. Մենք պետք է օրեցօր ժամանակ հատկացնենք Քրիստոսին ներծծելու համար՝ այն Անձին, ում մեջ տնկվել ենք. մենք պետք է ժամանակ հատ-

կացնենք Տիրոջը՝ որպես համաբովանդակ երկրի վայելելու համար, որպեսզի Քրիստոսի՝ որպես հարուստ հողի բոլոր տարրերը ներծծվեն մեր մեջ, որպեսզի մեր փորձառությամբ Նրա մեջ լեցուն դարձվենք՝ Կող 2:10ա, 4:2.

1. Եթե ուզում ենք ներծծել Քրիստոսի՝ որպես հողի հարստությունը, պետք է նուրբ, նոր արմատներ ունենանք՝ Դ Թգ 19:30, Եսյ 37:31, Երմ 17:7-8, հմմտ Մրկ 4:16-17, Բ Կրթ 4:16:
2. Կարիք կա, որ մենք մոռանանք մեր իրավիճակը, մեր կացությունը, մեր անհաջողություններն ու մեր տկարությունները և պարզապես ժամանակ հատկացնենք Տիրոջը կլանելու համար. երբ ժամանակ ենք հատկացնում Նրան կլանելու համար, մենք աճում ենք Աստծու՝ մեր մեջ աճելով՝ Քրիստոսի Մարմնի կառուցման համար՝ Ղկս 8:13, Մտթ 14:22-23, 6:6, Կող 2:7ա, 19:

Գ. Տիրոջ հետ շփվելիս չպետք է շտապենք. մենք պետք է վարժենք մեր հոգին, որպեսզի մնանք Տիրոջ ներկայության մեջ՝ Նրան ներծծելու համար. մենք պետք է ավելի շատ ժամանակ հատկացնեք Տիրոջը կլանելու համար՝ պաշտելու Նրան, փառաբանելու Նրան, գոհաբանություններ մատուցելու Նրան և ազատորեն խոսելու Նրա հետ՝ Սղմ 27:4, Ելց 33:11, 14, Մտթ 6:6, 14:22-23, Մրկ 1:35, հմմտ Եփս 4:20-21:

Դ. Մարմնի աճը կախված է մեր ներսում շատ սուբյեկտիվորեն Աստծու աճելուց, Աստծու մեծանալուց. Մարմնի աճն Աստծու կառույցի աճն է. եկեղեցու իրական կառույցը հավատացյալների՝ կյանքում աճելն է՝ Կող 2:19, Եփս 2:20-22, 4:16:

III. Կող 2:8-15-ը ներկայացնում է Քրիստոսի՝ որպես հողի մի ամբողջական նկարագրություն և սահմանում, որտեղ մենք ոչնչի պակասություն չունենք. երբ մենք ժամանակ ենք հատկացնում Նրան՝ որպես համաբովանդակ երկրի, ներծծելու համար, այս խոսքերում առկա փաստերը դառնում են մեր փորձառությունը. փաստերը Քրիստոսի մեջ են, իսկ փորձառությունը Քրիստոսով է և Քրիստոսի հետ.

Ա. Քրիստոսը՝ որպես հող, այն Անձն է, ում մեջ Աստվածության ողջ լեցունությունն է մարմնապես բնակվում՝ խ. 9.

1. «Լեցունությունը» վերաբերում է ոչ թե Աստծու հարստությանը, այլ Աստծու հարստության արտահայտությանը. Քրիստոսի մեջ բնակվում է ոչ միայն Աստվածության հարստությունը, այլև այն ամենի հարստության արտահայտությունը, ինչ Աստված է՝ խ. 9, 1:15, 18, 3:10-11:
2. Երբ մենք արմատավորվում ենք Քրիստոսի՝ որպես հողի մեջ, Նրա մեջ լեցուն ենք դարձվում. մենք լցվում ենք աստվածային ողջ հարստությամբ և դառնում Նրա արտահայտությունը՝ Եփս 3:8, 19:
3. Քրիստոսի՝ որպես հողի մեջ մենք լցվում, լրացվում, կատարելագործվում, բավարարվում և մանրակրկիտ կերպով մատակարարվում ենք. մենք ոչնչի պակասություն չունենք՝ հմմտ Փլպ 1:19:

Բ. Քրիստոսը՝ որպես հող, ամեն ղեկավարության և իշխանության Գլուխն է՝ Կող 2:10:
Գ. Քրիստոսի՝ որպես հողի մեջ կա սպանող զորություն, որով մսեղին մահվան է մատնվում՝ խ. 11:
Դ. Քրիստոսի՝ որպես հողի մեջ կա մի տարր, որը մեզ թաղվել է տալիս՝ խ. 12ա:
Ե. Քրիստոսի՝ որպես հողի մեջ կա մի տարր, որը մեզ հարուցանվել է տալիս՝ խ. 12բ:
Զ. Քրիստոսի՝ որպես հողի մեջ կա մի տարր, որը մեզ կենդանացնում է՝ խ. 13:
Է. Քրիստոսի՝ որպես հողի մեջ կա հրամանագրերում եղած ձեռագիրը ջնջող տարրը՝ խ. 14:
Ը. Քրիստոսի՝ որպես հողի մեջ կա մթնոլորտում եղող չար ոգիների նկատմամբ հաղթանակը՝ խ. 15:

IV. Բացի դրանից՝ Քրիստոսը՝ որպես հող, Աստծու պատմությունը և խորհուրդն է՝ Նրա անձի և գործընթացների ողջ հարստությամբ հանդերձ՝ խ. 2.

Ա. Քրիստոսն Աստված է՝ Հվի 1:1, 20:28-29, Եսյ 9:6, Հվի 14:9-10, Բ Կրթ 3:17, Ա Կրթ 15:45բ, Գրծ 2:36:
Բ. Քրիստոսը մարդ է՝ Ա Տմթ 2:5.
1. Նա Առաքյալն է՝ Եբր 3:1:
2. Նա Մարգարեն է՝ Գրծ 3:22-23:
3. Նա Խորհրդականն է՝ Եսյ 9:6:
4. Նա Ուսուցիչն է՝ Մտթ 23:8, 10:
5. Նա Առաջնորդն է՝ Եբր 2:10:
6. Նա Վարդապետն է՝ Ղկս 5:5:
7. Նա Ստրուկն է՝ Եսյ 42:1:
8. Նա Հովիվն է՝ Հվի 10:11:
9. Նա Վկան է՝ Հյտ 1:5:
10. Նա Քահանան է՝ Եբր 7:25-26:
11. Նա Միջնորդն է՝ 8:6:
12. Նա երաշխավորությունն է՝ 7:22:
13. Նա Թագավորն է՝ Մտթ 2:2:
14. Նա Փեսան է՝ Հվի 3:29, Բ Կրթ 11:2:

Գ. Քրիստոսը մեր ամենաանհրաժեշտ բաներն է՝ Հվի 14:6.
1. Նա մեր լույսն է՝ 8:12:
2. Նա մեր օդն է՝ 20:22:
3. Նա մեր ջուրն է՝ 4:14:
4. Նա մեր կերակուրն է՝ 6:35:
5. Նա մեր հագուստն է՝ Գղտ 3:27:
6. Նա մեր կացարանն է՝ Հվի 15:5:
7. Նա մեր վայելքն ու հանգիստն է՝ Կող 2:16-17, Մտթ 11:28:

Դ. Քրիստոսը մեր աստվածային ապահովումն է՝ Ա Կրթ 1:30.
1. Նա մեր զորությունն է՝ խ. 24բ:
2. Նա մեր իմաստությունն է՝ խխ. 24բ, 30բ:
3. Նա մեր արդարությունն է՝ խ. 30բ:
4. Նա մեր սրբացումն է՝ խ. 30բ:
5. Նա մեր փրկագնումն է՝ խ. 30բ:

Ե. Քրիստոսը եկեղեցու համար.
1. Նա Մարմնի Գլուխն է՝ Կղս 1:18:
2. Նա Գլխի Մարմինն է՝ Ա Կրթ 12:12:
3. Նա եկեղեցու հիմքն է՝ 3:11:
4. Նա Աստծու տան՝ եկեղեցու անկյունաքարն է՝ Եփս 2:20:
5. Նա նոր մարդու բոլոր անդամներն է՝ Կղս 3:10-11:

V. Քրիստոսը՝ որպես մեզ հատկացված բաժինը, մեր անքննելիորեն հարուստ բարի երկիրը, որտեղ մենք ոչնչի պակասություն չունենք, մեր համաբավարար Աստված և մեծ «Ես եմ»-ն է, ում կարող ենք օրեցօր փորձառաբար ապրել ու վայելել. այն, ինչ Նա է, բավարարում է մեր բոլոր կարիքները, որպեսզի Իր գալստյան համար բավարարվի Իր կարիքը՝ Իր եկեղեցին՝ որպես Իր Մարմինը կառուցելու և Իր եկեղեցին՝ որպես Իր հարսին պատրաստելու համար՝ 1:12, Երկ Օր 8:9, Ծնդ 17:1, Փլպ 1:19, Հվի 8:58, Եբր 11:6, Մտթ 16:18, Հյտ 19:7-9, 21:2:

© 2023 Living Stream Ministry